

ԶԱՐԴԱՐԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

(Կենսագրական ակնարկ Յ. Ճ. ՄԻՐՈՒՆԻԻ)

Գրագէտը որ մեր այսօրուան Գրական ասուլիսին նիւթը կը կազմէ, Ռուբէն Զարդարեանն է, մէկը թրքահայ գրականութեան վերածնութեան դէմքերէն, որոնք 1890էն առիւն նոր շունչ մը բերին թրքահայ գրական կեանքին մէջ, ոմանք իբրեւ ներկայացուցիչները եւրոպական մտքին եւ ուրիշներ ցեղին երակներէն քաղելով պատուաստը վերածնունդ հայ գրականութեան: Զարդարեան կը պատկանի այս վերջին դասակարգին, եւ Թլկատինցիի հետ կը կազմէ գլխաւոր առանցքը գաւառական գրականութեան շարժումին² որ 1890էն սկսած արդէն, հետզհետէ ուճացաւ, դառնալով վերջապէս գրական որոշ եւ կենսունակ հոսանք մը:

Ռուբէն Զարդարեան 1874ին Խարբերդի մէջ ծնած իր նախնական ուսումը ստացած է քաղաքին ազգային վարժարանին մէջ³: 1892ին նուիրուած ուսուցչութեան մինչեւ 1903 պաշտօնավարած է տեղւոյն Կեդրոնական վարժարանին մէջ, իբրեւ աւագ ուսուցիչ, դասաւանդելով գլխաւորաբար հայերէն լեզու, գրականութիւն եւ պատմութիւն: 1903ին իբր յեղափոխական ձերբակալուած Խարբերդի մէջ, անպարտ արձակուելէն քիչ ետք, 1904ին կը թողու Խարբերդը, գալ հաստատուելու համար Իզմիր, ուր ատեն մը Մանիսայի ազգային վարժարանին տեսչութիւնը կը վարէ: 1905ին, նոր ձերբակալութենէ մը հազիւ ազատուած, խոյս կուտայ Իզմիրէն դէպի Ֆիլիպէ, ուր նոյն տարին կը սկսի հրատարակել *Ռազմիկ* թերթը, զայն շարունակելով մինչեւ 1908, երբ Սահմանադրութիւնը հռչակուած, կը դառնայ Պոլիս, ուր 1909էն ի վեր կը վարէ *Ազատամարտ* օրաթերթի խմբագրապետութիւնը:

Զարդարեան իր գրական գործունէութիւնը սկսած է կանուխէն, 1890ին, երբ դեռ հազիւ տասներեօթը տարեկան